

կարծիքները՝ թէ փաստոս ո՞վ էր, ի՞նչ լեզուով գրեց, անոր պատմութեան զրոց վրայ Բնշ դատաստան ընելու է, անոր յիշած Սարարատ լեռը Բնշ է, Յակորայ Մօթնայ համար պատմածներն Բնշ ստուգութիւն ունին (73-84), — Հեղինակն՝ 93 էջին (93-104) դրած է Յաւելուած մը ընդարձակագոյն քննադատութիւն փաստոսի թիւղանկացոյ քննելի պատմական իմաստներուն . — այդ Յաւելուածն կրնայ ունենալ իւր օգտակարութիւնը բանասիրաց համար :

ԲԱ. — Ասորոց մատենագրական ազդեցութիւնն Հայոց վրայ . — Հաստատութիւնն իշխական մատենագրութեան . — Ս. Գրոց քարգմանութիւնն . — Հեղինակն կ'ամփոփէ հոս նախին հայ պատմչաց զրածններն՝ թէ ինչպէս հայ տառերուն զիւտէն առաջ Ասորոց տառերն ու լեզուն տիրել էին Հայոց մէջ : Կը պատմէ Ս. Գրոց հայ թարգմանութեան ժամանակը, հեղինակները, յետոյ կը կնքէ թէ Ասորոց ազդեցութեան մնացորդը են Զգօնի, Լարսեթնայի, Իգեմակոսի թղթաց, և այլն, թարգմանութիւնքն :

ԲԲ. — Աւագ Մասիս . — Դարձեալ կը դառնայ հեղինակն թուովայ Արծրունւոյ և Բիւզանդացոյ վկայութիւնները իրարու հետ համեմատելով՝ պարզելու թէ նոյեան տապանին լեռը Կորյուքը են թէ Աւագ Մասիս Հայոց :

Այսու կը կնքէ իւր փոքրիկ, բայց հմուտ յօրինուածով տետրը, որ իւր տեսակին մէջ մեծապէս գնահատելի է. վասն զի հեղինակն ջանացեր և յաջողեր է, եթէ ոչ լիովին, ամփոփելու իւր բնորած նիւթին նկատմամբ եղած քաղցածի կարծիքները և ուսումնասիրութիւնները. միայն փափաքելի ձգեր է՝ որ ինքն եւս շատ աւելի իւր կողմէն գնել մի քանի իրեն սեփական զիւտեր կամ քննութիւններ, հետեւաբար՝ գրեթէ այս պակասին համար կարելի է այս հմուտից տետրը կոչել լատին բառով *Repertorium*, որ առաւելապէս զերմանագիտաց պիտի նպաստէ քան այդ լեզուն չգիտող ազգայնոց, որոց համար անշուշտ հեղինակն այդ տետրին թարգմանութիւնը իրեն վերապահեր է :

Հ. Ս. ՍԱՐԵԱՆ

ԱՐՇԱԼՈՅՍ ԵՒ ԱՐԵՒԵԼԷ

ԼՈՒՍԱԽՈՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ

(Շար. տիս էջ 101)

ԺԴ.

Տրդատայ երթալն առ Կոստանդիանոս եւ Գալիքն . — Գրիգորի Եպիսկոպոսապետութիւնն, եւ Եպիսկոպոսմոր ու վանքեր հաստատելն :

ՀԻՄԱՅ որ պատմութեան այս ամենանշանաւոր կէտին հասանք, և զՏրդատ և Կոստանդիանոսի հրապարակի գործառնութեան տեսանք, ասոնց իրարու հետ տեսութիւնն՝ որ զբական և աւանդական դէպք մի է, հարկաւորէ զմեզ դիտել քննել, վասն զի և կրօնական մասն ունի խնդիրն և ոչ միայն քաղաքական : Որչափ ինչ որ աւանդուած է նկատմամբ խնդրոյս՝ ոմանց բաւական չերեւիր ի ստուգութիւն . սակայն եթէ ստույգ այլ չըլլար, այնքան յարմար և վայելուչ էր՝ որ գրեթէ անկարելի այլ կըրնար ըսուիլ չըլլալն : Ժամանակն այսինքն տարեթիւն, և պարագայն (Բնշ ճամբով, որոյ հետ և որքան զօրօք երթալն Տրդատայ, Բնշ դաշինք դնելն իր հին ծանօթ բարեկամ և նոր աշխարհականին հետ), կըրնան այս կամ այն կերպով ըլլալ, բայց էականն աներկբայ է. և եթէ օտարը չեն նշանակած զայդ, զարմանք չէ, վասն զի թագաւորաց երթալն է չ'ուով՝ նոր բան մի չէր երեւեր այն տառն . իսկ այնպէս մեծաւ հանդիսի երթալն Տրդատայ, հանդերձ իր երկրին Լուսաւորիչ Գրիգորի և անոր յաջորդ որդւոյն Արիստակիսի և աթոռակալ, Ալիքանդաի, որոց հետ է քաղաքական իշխանաց՝ հետեւէին չորս Ֆիշիսքն, այսինքն կողմնակալք կամ սահմանակալք Հայաստանի, տասն մեծամեծ նախարարք և 70,000 այլ զօրականք, չափաւորապէս իմանալի է : Նախ, որ հալածանքն դադար և քրիստոնէական ազատութիւնն հռչակուած

էր, համարձակութիւն էր արեւելից մէկ հաս-
տիկ քրիստոնեայ թագաւորին՝ հանդիսապէս
երթան առ մեծագոյն թագաւորն. երկրորդ,
հաւանելի է մեր թագաւորին բիրաւորօք
ճամբայ ելլելն, այլ տեղ տեղ թողուլ զօրաց
գունդ, և ոչ թէ եօթն բիւրովք ի վաղար-
չապատէ մինչեւ ի Հոռովմ երթալ: Այս խն-
դիրս պարզէ աւելի կարեւոր և վիճաբանեալ
խնդիր մի ի մէջ դիտնոց. որ է Թէոդոսեան
Օրինագրոց մէջ հրովարտակ մի Կոստանդ-
կայսեր առ Պրոկիլիանոս պաշտօնեայ մի, վասն
սպակարկ ընելու զԱլլալի թագաւոր Հայոց,
այսինքն ազատ թողուլ զնա ի հարկէ, և թոյլ
տալու ազատօրէն գալու երթալու, միայն
կայսեր և անոր քանի մի առանձնաշարհեալ
անձանց կերպով: Ոմանք ի գիտնոց համարին
այս օրինադիրս՝ զԿոստանդ որդի մեծին
Կոստ. և թագաւոր Հայոց՝ զԱլլալի որդի
Տիրանայ. սակայն գիտնագոյնք հաւանին՝ թէ
ամեն Ալլալիունի թագաւորք և Տրդատ եւս
Ալլալի կ'անուանէր. հրովարտակին թուա-
կանն այլ՝ Կոստանդիանոսի և Վիկինիոսի
բղելիտութեան Գ տարին՝ է, 315 թուականն
Քրիստոսի, որ է նոյն կամ նախընթաց տարի
Տրդատայ ուղեւորութեանն ի Հոռովմ, և այս
ամթիւ Կոստանդիանոսի յիշելն զնա Ալլալի
անուամբ յարմար է, և հաստատութիւն մեր
խնդրոյն և պատմութեան:

Իսկ ժամանակ ուղեւորութեան Տրդատայ՝
ի սկզբան երեւի անմիջապէս ի լսելն Կոս-
տանդիանոսի հրատարակելն զազատութիւն
քրիստոնէից, յամի 312-3, ըայց Մաքսիմի-
նոսի արշաւանքն արգելք եղած է. և յետ
երկու տարւոյ 315ին կամ 316, երբ Կոս-
տանդիանոս իր տասնամեկին հանգէսը կա-
տարէր ի Հոռովմ, ուր և գտուած է այս եր-
կու տարինբուս ամառնային եղանակին՝
Առաջին պատմող այս կարեւոր տեսաւորու-
թեան թագաւորաց և քահանայապետից՝ (զոր

Խորենացին չի յիշեր), ինչպէս վայել էր ըւ-
լալ, է Ագաթանգեղոս, որոյ գրածն ի ՃԻԶ
գլուխ պատմութեանն արժէ որ կարգայ մեր
ընթերցողն. մենք ղնեմք ի կարգի բանիցս
զվերջին մասն. « Խաղալոր գնայր (Տրդատ)
« Վարդապետ գաւառէ ի վաղարչապատ քա-
« զաքէ, անցանել ի Ժաւհան Գունաց. զանց
« առնէր զբագում օթելանօք, մեծաւ ուրա-
« խութեամբ, և բազում պատիւս պատրաս-
« տութեան հպատակութեան՝ ըստ քաղաքաց
« քաղաքաց գիտելոց, և իշխանաց իշխանաց
« պատմահեղոց, գտանէին մեծարանս ընդու-
« նելութեան. ընդ ցամաք և ընդ ծով փու-
« թացեալ աճապարէին՝ մինչ երթային հա-
« սանէին. ի թագաւորական քաղաքն Հոռով-
« մայեցոց. զորմէ իսկոյն պատեալ յար-
« քունտկան պալատանն. զոր իբրեւ լուսա-
« աստուածակարք թագաւորս պատուակալ
« աթոռօցն՝ Կոստանդիանոս, և հայրապետն
« մեծ արքեպիսկոպոս աշխարհամուտ գրանն,
« որում անուն կոչէր Սեղբեսարոս². որք
« մեծաւ սիրով պատիւ արարեալ՝ ընդ առաջ
« ելանէին և տուեալ հանգիստ՝ շնորհս ու-
« նել ժամանակս ինչ անդէր ի տիեզերական
« քաղաքին... Ապա յետ այսորիկ մեծարեալ
« ինչեւն զարմանօք, մեծապատիւ շքեղու-
« թեան կարգօք յարքունեացն և եկեղե-
« ցեացն, և ի պատուական իշխանաց քա-
« ղաքին, և մեծամեծ պատարագօք և երե-
«ւելի պարգեւօքն պատուեալ սիրով, և այլն:

Մեծ պատուով ընդունուած է, կ'ըսէ Ագա-
թանգեղ, որպէս արժան էր և Ս. Լուսաւորիչ
մեր, որոյ վրայ « զարմացեալ կայսրն Կոս-
« տանդիանոս՝ խոնարհեցուցեալ զանձն՝ ան-
« կանէր առաջի Գրիգորի, զի օրհնեացի ի
« նմանէ. և բազում վայելուչ մեծարանօք
« պատիւ արարեալ նմա՝ իբրեւ Խոստովա-
« նողի Քրիստոսի, ըստ արժանաւորութեան
« նորս: Սոյնպէս և արքային Տրդատայ ի-

1. Ինչպէս ընդունին հիմայ Հէֆէլէ և Ա.
187. — Լը Պոյ Ա. 166. — Պրոկլէ Ա. 292. —
Դիյլման, Գ. 165:

2. Հակոբակ հասարակաց աւանդութեան մեր
պատմիչաց, Ուխտանէս (Ա. Էջ) ոչ զՍեղբեսարոս
այլ զԽանքիտա պապ յիշէ, որ հազիւ երեւցեր

է քահանայապետութեան գահուն վրայ, և այն
յամին 311, հարածանաց աստիճանութեան ատեն.
Թէպէտ կան որք աւելի վերջը զնեն զնա. ըայց
չի յարմարիւր վասն զի Սեղբեսարոսի նախորդ
եղած է Մելտիարէս, յետ քաղաքման հաւա-
ծանաց:

« քրեւ եղբոր սիրելոյ՝ սէր ցուցեալ ուրա-
 « խութեամբ մեծաւ, մանաւանդ վասն աւ-
 « տուածածանթութեանն նորա առաւել,
 « Դաշինն կոհր ընդ նմա, միջնորդ կաշեալ
 « զհաւատան որ ի Տէր Քրիստոս էր. զի ան-
 « շուշտ մինչ ի բուն զհաւատարիմ սէրն ի
 « մէջ թաղաւորութեանցն (երկոցուն) պա-
 « շուցին » : Այս իմաստովս և զրեթէ բա-
 « ռերով՝ Ներսէս Գ. կաթողիկոս ի կէս է դա-
 « րու զրէ առ Կոստանդին կայսր. « Իբրեւ
 « տեսին զմիմեանս... միջնորդ կալան զհա-
 « ւատան որ ի Տէր Յիսուս Քրիստոս, և երդ-
 « մամբ միաւորեցան երկաթին թապաւորքն,
 « անշուշտ ունելով զխաղաղութիւն ընդ մի-
 « մեանս մինչեւ յաւիտեան՝ ի մէջ թաղա-
 « ւորացն երկոցունց. և եւս Հաստատեցին
 « առ մեզ զհաւատան ճշմարտութիւնն, զոր
 « Հինգաբարեաց մեզ Ս. Հոգին » : Այս խոս-
 « քերուս վրայ բարդած և բրդած է անյայտ
 « անձն անյայտ ժամանակի, բայց թուի ԺԲ-
 « ԺԳ. դարու, մեծահոյակ Դաշնաց թողորդ,
 « որ ի յետին ժամանակս նա և ի յառին և
 « յիտալ լեզու թարգմանուած և աղագրուած
 « եւս է. յորում բաւական յարմար և աւելի
 « անյարմար մեծաբանութեամբ նա և փռանկ
 « բարեւոր, Տրդատ Կոստանդինոսի կողմանէ
 « իբրեւ իրեն երեսփոխան կարգուի յարեւելս,
 « Գրիգոր այլ ի դիմաց Ս. Սեղեմստորոսի՝ զրե-
 « թէ նոյնպէս ընդարձակ եկեղեցական իշխա-
 « նութեամբ. և այս գաշինքս երկու կողմանէ
 « Քրիստոսի արեամբ (թաթխելով զրիչը) կըն-
 « քուած կ'ըսուի : Աւելի Հաւանականութեան
 « ցոյց ունի Պարզեւնագիր կամ սահմանագիր
 « մի Մշտ Ս. Առաքելոց վանաց, յունարէն
 « բնագրեալ Հրամանաւ Ս. Իւստուորչի և պա-
 « հուած իր ձեռաց կնքով՝ մինչեւ ի վերջ
 « ԺԱ. դարու, ըստ վկայութեան Չորտուանէ
 « Մամիկոնեան իշխանի, այն է Սասնոյ կող-
 « մերու, որ թարգմանել տուած է զայն յու-
 « նարենէն ի Հայ, և իր ձեռնագրով ընդօրի-
 « վանաց մեծ Ճառընտրի մի մէջ, իբր 800 տա-
 « բուան հնութեամբ. յորում կ'ընէ Ս. Գրի-
 « գոր. « Խնամօքն Աստուծոյ և առաջնորդու
 « թեամբ, կամ եղեւ ինձ և աստուածասէր
 « և քրիստոսապաշտ արքային Հայոց Տրդա-
 « տայ՝ գնալ ի տես, ի սէր և ի միաբանու-

« թին մեծ քրիստոսասէր և բարեպաշտ աշ-
 « խարհակալ կայսերն Հռովմայեցոց Կոս-
 « տանդինոսի... մեծամեծ պատուով և ա-
 « մենաշատ սիրով ընկալեալ եղաք յաստուա-
 « ծասէր և բարեպաշտ արքայէն Կոստան-
 « դիանոսէ և ի սուրբ առաքելանման Հայ-
 « բապետէ Սեղեմստորոսէ. կացեալ ժամա-
 « նակս ինչ առ նոսին, Դաշն սիրոյ և միա-
 « բանութեան եղաք առ միմեանս, քրիստոսի
 « արեամբն գրել և միջնորդել, զի անջրելի
 « լիցի ուխտ և միաբանութիւն Հայոց և
 « Յռանկաց¹, մինչեւ ի կատարած աշխարհի,
 « Իսկ զկին դառնալոյն մեր յաշխարհն Հայոց,
 « ի ժամ բաժանմանն՝ պատուաւք եղաք ի
 « նոցանէ փառօք, մեծամեծ և անթուելի
 « պարգեւօք, զոր (յ)ամենայնի կատարեալ
 « Հաւատով և շնորհաւոր սիրով խնդրեցաք
 « մեք ի նոցանէ, կապ սիրոյ և հաստատու-
 « թեան Դաշնաց զոր եղաք, ի Նշխարաց
 « սուրբ զխաւոր Առաքելոցն՝ Պետրոսի և
 « Պաւլոսի » :

Թէ Չորտուանէլ և Թէ մանաւանդ Ագա-
 « թանգեղ յիշեցին՝ որ Կոստանդինոս մեծա-
 « մեծ պարգեւներ տուած է Տրդատայ. և
 « վայելուչ էր այսպէս ըլլալն. այլ միթէ աւե-
 « լի եւս վայելուչ չէր որ Տրդատ այլ իր մե-
 « ծարարութեան և իր բարեկամին փառա-
 « ւորութեան համեմատ՝ ընծաներ բերած ըլ-
 « լայ : — Ամենեւին ասարակուսելի չէ, թէ և
 « յիշուած չըլլայ. և ես կարծեմ թէ իր տա-
 « բածին մէկն կամ մէկ մասն գեռ կանգուն կայ
 « փառաւոր տեղ մի շատ դարերէ վեր, աշ-
 « խարհածանօթ և աշխարհատեսիլ, և զրեթէ
 « ստեպ իմ աշացս առջեւ : Այն Հին յուն-
 « արուեստ ոսկեգոծ պղնձէ յորս Երիվաբքն, որ
 « ի քաղաքիս (Վենետիկ) մայր եկեղեցոյն ճա-
 « կատում՝ իրեւ օգաթօղիք՝ զարմացընն զա-
 « մեն մտացի տեսող, և զոր աւանդութիւն մի
 « համարի թէ Տիրիթ ոմ թագաւոր Հայոց բե-
 « րած ըլլայ առ Ներոն կայսր. բայց շատ աւելի
 « Հաւանական է որ մերս Տրդատ բերած է առ
 « Կոստանդինոս :

Դառնալով առ Դաշինն, ստոյգ դաշնա-

1. Հարկ է թէ ի բնագրին Հռովմայեցոց էր.
 « Թարգմանին իր ժամանակի անով ֆրանց զրեւ է :

գրութեան մեծ վկայութիւն մի է և Քուզնեցայ (Գ. ԻԱ) յիշածն, թէ նախարարք Հայոց յետ գերութեան և կուրութեան իրենց թագաւորին Տիրանայ, գիմեցին առ կայսրն Յունաց. « Մանաւանդ զի զուստն յիշեալ « գիալանցն կոնքոց գերդմանցն հաստատուաւ « քեան, միշնորդութեամբ ի մէջ կայսրն կուս. « տանդիանսի և ի մէջ քաջատրիին Տրդաւ « տայ եղեալ էր » : Ե դարու մեր եկեղեցւոյ գլխաւորաց գրածն առ թէնդոս Փարս կայսր, որ յետ յիշատակի դաշնագրութեան Տրդաւ տայ և կոստանդինոսի, կ'ըսուի. « Այսպէս « և զՀաւատան որ ի Քրիստոս » ընկալաւ ի « սուրբ եպիսկոպոսապետէն Հռովմայ, որ « լուսաւորեաց զխաւարային կողմանս հիւս « սիսոյ » : Այս խօսքս Տրդատայ (վերաբերի քան Քրիգորի, զի սա ի Կեսարիոյ ընկալաւ գծեանագրութիւնն, գրուածն այլ (առ Եղիշէի) կցկաուր և տեղ տեղ անյարմար է. Հասարք բաժն այլ կըրնայ իմացուիլ Հաւատաւն, զոր արդարեւ ի Նիկիոյ ժողովոյն ընդունեցան Հայք՝ Տրդատայ և Քրիգորի աւտեն, և ժողովոյն զուխն՝ ի ձեռն իրեն երեսփոխանացն՝ էր եպիսկոպոսապետն (Պապն) Հռովմայ, թէպէտ ոմանք, ինչպէս Քրիգոր (Գ) Տղայ կաթողիկոս՝ ի թղթին առ Վերին Հայս, հաւանորէն թուի ըսել՝ Լուսաւորչին « առնու ձեռնագրութիւն ի Ս. Սեղրեստորտսէ » : հարկ է զայդ. հաստատութիւն իշխանութեանն իմանալ. զի յետ ընդունելոյ մի անգամ ի Ս. Ղեւոնդիայ՝ կարելոյ չէր նորէն ընդունիլ, և նոյն իսկ Լուսաւորչի յաւորդքն եւս ի Կեսարիոյ ընդունեցան. Նիկիոյ ժողովն այլ Չ և Է կանոնովքն հաստատեց, որ նախնացն կարգք և պատիւք պիտոցն՝ պահեցնին որպէս էին ցայն ժամ : Այս բանս հաստատուի երեւի և Բարդէն կաթողիկոս ի վերջ Ե դարու կամ ի սկիզբն Ձին, ըսելով վասն Արիստակիսի. « Ընկալեալ ի « սուրբ Հարցն բողոքովմբ Քուսար հաստան « ձշնադատարեան, երեւր յաշխարհն՝ ճշմարտու « թեամբ. զոր առեալ ի նմանէ Հայոց, և « նովին հաւատովք լուսաւորեցաք, և ի նմա « նէն յաշնորդեալ մինչեւ ցայժմ ձեռնու « գրութիւն հայրապետութեան աշխարհին « Հայոց, և կամք հաստատուն ի նմին » : Վեբոյնիշեալ Քրիգոր կաթողիկոսն այլ զրէ առ Մա

նուէլ կայսր. « Եր մի ի սուրբ ժողովոյն (Նիկ « կիոյ Հարցն) արքեպիսկոպոսն Հայոց մեծն « Արիստակէս՝ որդի Ս. Քրիգորի. յարմէ ըն, « կալեալ զաղգարիսա դաւանութիւնն Նիկիա « կան ժողովոյն՝ զղուշացաւ եկեղեցի մեր » : Այս տեղ (թողով առ ժամս մեր Տրդատն ի դարձին) արժան համարիմ ժոր հայրապետաց ի Կեսարիոյ ձեռնագրութիւլ քիչ մի քրքրել : — Յայտ է որ յառաջին դարս եկեղեցւոյ՝ սորա տիպոց դասակարգն այլ ըստ կարգի պատուոյ աշխարհաց և քաղաքաց էր. երկց մասանց աշխարհի մէկ մէկ զուտ եւ պիսկոպոսաց կար, Եւրոպիոյ՝ ի Հռովմ, որ և ամենուն զլուսն, Ասիոյ՝ յԱնտիոք, Աֆրիկիոյ՝ յԱլեքսանդրիա, որք յետոյ պատրիարք կոչուեցան. և որոց գերագոյն իշխանութեան ներքեւ էին մտլորադաղաքցի եպիսկոպոք (մեարապոխաք), և ստորակարգաք (եպիսկոպոսուք. յետոյ Էփեսոսի մտլորադաղաքացին փոխեցաւ ի պատրիարք Կ. Պոլսի, Փիլիպպեայ Կեսարիայն՝ ի պատրիարք Երուսաղեմի : Մայրաքաղաքացեաց ոմանք այլ աւելի բարձրապատիւ էին և ինքնապաւն կոչուէին. այսպիսի էր Կապպադոկիոյ Կեսարիայն այլ. այս պատրիարքն երէն և մետրապօլիտն երէն կ'առնուին ձեռնագրութիւն՝ իրենց աշխարհաց եպիսկոպոսքն : Կրք Հայք աշխարհորէն դարձան ի քրիստոնէութիւն Տրդատայ ժամանակ, եթէ և գտուէր եպիսկոպոս մի ի Հայս, բայց զխաւոր եպիսկոպոս և իբր յաւորդք առաքելոյ չկայր, եղածքն այլ ըստ աւանդութեան՝ զոր նախ յիշեցինք՝ ի Կեսարիոյ առնուին ձեռնագրութիւնն. որոյ առաջին եպիսկոպոս ի Թագէտո առաքելոյ կարգեալ համարին գթեփիլոսոս՝ յիշեալն ի Ղուկայ աւետարանչէ. բայց ոմանք ի գիտեց և ոչ անձն համարին գթեփիլոսոս, այլ ըստ յունարէն լեզուի աստուածաւոր նշանակութեամբ աստուածամար, բարեպաշտ անձինք, սակայն և շատք ընդունին զնա իբք անձն, բայց չեն գիտեր վարքը, որով և չեն ընդունիլ զնա առաջին եպիսկոպոս Կեսարիոյ մայրաքաղաքի, այլ զՂնդիմոս կամ Լուկիանոս, և զսա համարին հարիւրապետը՝ որ խոցեց զկողմ Քրիստոսի¹. սորա յաւորդեց

1. Ս. Քր. Նագիանդացի այլ առաջին եպիս.

Պրիմիանոս ոմն, և այլք հետզհետէ մինչեւ ի Ս. Ղեւոնդիոս, յորմէ ընկալաւ մեր Լուսաւորին զձեռնադրութիւն եպիսկոպոսապետութեան, իր յալորդքն այլ անոր յալորդքն երէն¹։ Սիբ պատմիչն Վարդան բացարձակօրէն կ'ըսէ Լուսաւորչի համար. « Երեսնեւ « բորդ տաի Լուսաւորչութեան իւրոյ Ս. Գրի- « գոր զԱրիստակէս առաքէ ի Կեսարիա ձեռ- « նադիր²՝ վասն զառաջին ձեռնադրութիւնն « անդ առնելոյ Թադէոսի առաքելոյն և ար- « կանելոյ Հիմուռն եկեղեցւոյ »։ Ի Կեսարիա ձեռնադրուիլն կաթողիկոսաց կամ եպիսկոպոսապետաց Հայոց՝ տեւեց մինչեւ ի Ս. Ներսէս կամ ի Ս. Սահակ։

Արշապի ինչ իշխանութիւն ունէր եպիսկոպոսապետն Կեսարիոյ իր ձեռնադրեալ Հայոց եպիսկոպոսապետին վրայ. Թուի թէ ոչինչ աւելի քան զձեռնադրելն, և մի իր մետրապօլիտաց համարել զնա, և գուցէ իրեն գատաստանին վերաբերել³ եթէ շփոթութիւն ինչ ըլլար Հայոց եպիսկոպոսապետին և անոր եպիսկոպոսաց մէջ։ Եւ զի Հայք առանձին թաղաւորութիւն ունէին, վայել էր որ իրենց եպիսկոպոսապետն ույլ իր կարգակցաց մէջ բարձրապատիւ ըլլար և ընդհանրական կամ նազանգական ժողովոց մէջ՝ մի ի նախագահից։ Արդէն տեսանք որ երբ Ղեւոնդիոս ձեռնադրեց զԼուսաւորիչ մեր՝ ուրիշ բան չըպահանջեց, բայց զի այնպիսի ձեռնադրութեամբ « Հաստատեալ կայցէ վկայութիւն ի « մէջ երկուց կողմանցս. զի պարզեւաբաշ- « խութիւն նորոգեալ քահանայապետութեանդ « ձերայդ նազանգիրդ՝ առ ի մէջն, կայցէ ան- « շարժ՝ յեկեղեցւոյս Կեսարու, ուստի և հան- « զերձեցաւ ձեզ պատրաստութիւն շինու- « թեան՝ ձեռնադրութեամբ »։ Եթէ ստույգ այսպէս էր բնագիրն Ղեւոնդիոսի՝ շատ նշանական է նորոգեալ քահանայապետութիւն ըստն, և տայ հաստատել զկարծիս մեր՝ թէ

ընդունի և Ս. Ղեւոնդիոս՝ որ առաջուց այլ եղած է քահանայապետութիւն ի Հայս, և որ և է կերպով խափանեալ կամ ընդհատեալ, և Հիմայ Լուսաւորչութեամբ Գրիգորի և ձեռնադրութեամբ Ղեւոնդեայ՝ նորոգեալ։ Եւ եթէ եղած էր առաջ այլ քահանայապետութիւն՝ կըրնար այլ ուրիշ կերպով կամ արիւ աթոռէ առած ըլլալ այն հին քահանայապետաց Հայոց՝ իրենց ձեռնադրութիւնն. և արդէն տեսանք որ աշակերտք Թադէոսի կամ յալորդք՝ Փիլոտ և Եղիշէ՝ մէկն յԱնտիոքայ աթոռոյն առաւ զայն, միւսն՝ յԵրուսաղեմէ։ Պէտք է յիշել և զայս, զի Հայոց վիճակն կամ կացութիւնն այս ժամանակ՝ շատ նշանաւոր և անմասն էր. ընդարձակ աշխարհ մի և բազմամարդ, իր յատուկ Թագաւորի իշխանութեան տակ, երբ և ոչ մի ազգ այդպիսի պսակաւոր գլուխ մի ունէր, կամ առանձին օրէնք, սովորութիւն և ընդունակութիւն ի հոգովմէականէն, և ընդարձակ ազատութեամբ, ըստ Գալանց Առաստաղիանոսի և Տրդատայ։ Եւ այս ամենայն ցոյցընեն ունման գիրք մի Հայոց ազգին և եկեղեցւոյն, և ասոր զխոյն գերագոյն պատիւ կամ բարձրագոյն տիտո մի ի մէջ աթոռակցաց։ Եթէ Գրիգորի հեզ և խոնարհ սիրտն զայս չէր պահանջեր, « մեծհոգի Տրդատայ սէրն՝ առ նա և երախտիքն՝ անուշտ զաւելին այլ կըրնար, թէ և ոչ ըստ շաղիադիութեան անուանեալ թղթոյն Գալանց։ — Բայց, եկեղեցականաց կարգերու զխաւարն՝ էր և է սէրն և հոգին Քրիստոսի, որ շատ տաք էր այդ դարերում, որ և դարձեալ նշանաւոր նախախնամական շնորհքով սիոնեաց և ի Հայս, Լուսաւորչի արթուն և եռանդուն հոգով և ջանիւ։

Այս բանս էր տեսակ մի միաբանութիւն եկեղեցւոյս Հայոց, երբ Լուսաւորիչ իր ընդարձակ վիճակին համար՝ ամեն զխաւար ե-

կոպոս Կեսարիոյ համարի զհարկաւապետն, զոր Պրիմիանոս անուանէ։

1. Վերոյիշեալ կաթողիկոսն Ներսէս Գ. մեծացուցանելով իմն նախակարգէ խառնիխուռն զԹէոփիլոս յեպիսկոպոսապետս. « Գլխաւոր « առաջնորդաց եկեղեցւոյ՝ ի քաղն Թէոփիլոս

« սէ՛ ի մեծ հայրապետէն սկսեալ, արուես- « տաւոր քաղաքացն Սեդպտացւոց և Աղեբ- « սանդրացւոց և Հոգովմայեցւոց և Առաստանդնու- « պօլսեցւոց՝ Անտիոքացւոց և Կեսարացւոց և « Աթենացւոց և Կիւսիկեցւոց », և այլն։

կեղեցիներէ իրեն օգնականներ հովիւներ հրաւիրեց հաւաքեց . նախ ի Յռնաց, երբ կու գառաքար ի կեսարիոյ, և մինչեւ յԱնտիքայ եւ, ապա և յԱսորոց՝ որք սահմանակից էին հարաւային նահանգաց մեր աշխարհին: Այսպիսի էին նոյն իսկ պատմիչ Բանիս Զենոպր եպիսկոպոս և իր եղբայրն Եղիազար, և Դանիէլ՝ որ և եղաւ գլխաւոր աթոռակալ մի Լուսաւորչին: Աղեքսանդրիոյ մեծ եկեղեցիէն այլ որսաց բազմահմուտ վարդապետ մի . Դիլարիոս կամ Դիմառիոս կոչուած, զոր արքայաշուք Դուսնայ — դաշտ գաւառին եպիսկոպոս կարգեց . Եփեսոսի ինքնագլուխ եկեղեցիէն այլ՝ զՍոքրատիս : Յիշուած չէ բայց և չէ անհաւանական՝ թէ Ս . Նշխարաց և ապառուց Հեո՝ ի Հռովմէ այլ բերած ըլլայ պաշտօնեաներ, յորս՝ թէ՛ յոյն լեզուաւ և թէ՛ լատին պատարագողք կային այն դարուսմ . և այսպէս իբրեւ յերկի և յերկի գլխաւոր տիեռոց՝ իր նորածին կամ վերածին եկեղեցւոյ տարերք խառնեց միացուց, և ըրաւ մի մարմին քրիստոնէայ, թէ և տարբեր լեզուօք պաշտէին զսուրբ խորհուրդս, ըստ հասկացողութեան բնակչաց այլեւայլ գաւառաց աշխարհիս . բայց յայտ է որ յունականն տիրէր յարեւմտակողմն և ի միջնաշխարհին, ասորին՝ ի հարաւակողման գլխաւորապէս ի Տարօն . ուր կանգնեցաւ առաջին մայր եկեղեցին ի Յաշտիշատ, և մեծ վանորայքն Ս . Կարապետի և Առաքելոցն Պետրոսի և Պօղոսի, յորս դրուեցան անոնց Նշխարքն ի կեսարիոյ և ի Հռովմէ բերուած, և ուր ասորերէն պաշտօնէն հայերէն դպրութեան կամ գրող գիւտէն վերջ այլ գեւա ատենն մի անեցն: Ոչ այնչա ցորեռու և Ս . Գրոց Թարգմանութեան պակասութիւնն այլ հարկաւորեց զՍ . Գրիգոր՝ որ յոյն և ասորի լեզուաց դպրոցներ և շատ դպրոցներ և գիտուն վարպետներ կարգէ՝ այլ և Տրգատայ օգնութեամբ անոնց պէտքը լեցնէ:

Յայտ է որ թէ՛ այդ վարպետք և թէ՛ եկեղեցւոյ վարդապետք, քահանայք և եպիսկոպոսներ կամ հայազէտ էին կամ յոյն և ասորի լեզուաց հմուտ հայ Թարգմաններ ունէին, որով եկեղեցւոյ ամեն վարդապետութիւնն և խորհուրդք՝ գլխաւորաւն պատահաւ՝ հասկանալի կ'ըլլային հասարակաց և գուցէ այն ատենէն ոմանք փորձեցին որ և

է ձեւով կամ կերպով՝ հայերէն կարդալու գրեւու հնարք, կամ տար լեզուաց տառերով գրել զհայերէնն . վասն զի անկարելի թուի մտրող դար մի ժամանակին, ի Լուսաւորչէն մինչեւ իր թուան թուան Թարգմանիչ Ս . Սահակ՝ մէկն մտածած չըլլայ այդպիսի բան մի՝ ուսմիկ ժողովրդեան հոգեւոր օգտին համար, թող զուսուռնականն: Եթէ պակասութիւն մի եղած է յայսմ՝ այն այլ ուրիշ կողմանէ առաւելութիւն մի ցուցնէ, այսինքն է յունարէն լեզուի բաւական ծաւալուած ըլլալն ի Հայս՝ մեր Արշակունի Տիրաւորներն ի վեր, նմանապէս և ասորերէնին՝ ի հարաւային Հայս:

Սրառես աչօք ճանչնար Լուսաւորիչ մեր՝ որ իր ժողովրդեան կրթութիւնն տղայոց դաստիարակութենէն յուսալու է . անոր համար զերթէ ամեն բանէ առաջ զայս հոգաց, և ժողովեց, ըստ ճոխարան վկայութեան Ագաթանգեղոսի (ՃԻ), « Բազմութիւն մանկուոյ . « կարգեալ ի վերայ Հաւասարիմ դպրապետս . « առաւել զազգս պղծագործ քրմայն . . . Եւ « անդէն յական Թթափելի՝ վայրենամիտքն « և դաստաբակասունքն . . . մարգարէագէտք և « առաքելածանօթք և աւետարանածառանգք « լինէին, և ամենայն տաւեղելոցն Աստու « ծոյ՝ ոչ իւրք անտեղեկաց »: Այս դպրապետքս զերագոյն մէկն էր վերոյիշեալ Դիլաւորիսն՝ Աղեքսանդրիոյ հոշակաւոր Պանտենեան վարժարանէն, զոր հանդերձ ընկերօքն՝ ճրաչազան պաշտօնեայն անուանէ Զենոպր . մէկն այլ Տիմոթէոս Սաղգեն կամ Աղոն քաղաքի եպիսկոպոս, զոր գրով խնդրեց Լուսաւորիչն ի Ղենդեղեայ, ըսելով . « Ձոր գու իսկ « զովիչի զհմտութիւն դպրութեանն, որ յոյժ « պիտանի է երկրիս այսմիկ »: Տիմոթէոսի Հեո էր և սարկաւազն Աքիկոս կամ Ազգիկոս, որոյ համար այլ կ'ըսուէր, թէ « յոյժ « հմուտ (էր) բազում զպրութեանց »: — Այսպիսի գիտնականաց վարպետութիւնն և բնատուր՝ մանաւանդ թէ՛ աստուածատուր սրամտութիւնն եռանդուն հայ մանկուոյն, հոգեւունչ խրախոյս Լուսաւորչին և առատաբախտութիւն Տրգատայ, անտարակոյս կ'ընեն չափաւորապէս Աջաթանգեղոսի նախաշինեալ վկայութիւնը:

Շարայարեղի Զ . Դ . Գ . Մ . ԱԼԵՃԱՆ